ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.08.2013թ.
206-4

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային
ոստիկանության պետ
պարոն Արսեն Գալստյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գալստյան,

ՀՀ Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի տեսուչ Կարեն Գեւորգյանը 30.06.2013թ.-ին ժամը 18:35-ին ք. Երեւանի Գրիգոր Լուսավորիչ/Բեյրութ խաչմերուկի հատվածում PEUGEOT մակնիշի 21UU516 համարանիշի մեքենայով արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցից առաջ անցնելով՝ արգելող ազդանշանին չենթարկվելու համար վարչական տույժ նշանակելու մասին 13.07.2013թ.-ի իր թիվ 1300732640 որոշմամբ ինձ տուգանել է 50.000 ՀՀ դրամի չափով:

Հայտնում եմ, որ վարչական իրավախախտման արձանագրման ժամանակ չեմ վարել PEUGEOT մակնիշի 21UU516 համարանիշի մեքենան, ուստի որեւէ կերպ չէի կարող կատարել ՀՀ ՃՈ 13.07.2013թ.-ի թիվ 1300732640 որոշմամբ նկարագրված վարչական իրավախախտումը: Վարչական իրավախախտման հատկանիշները նկարագրված են http://offense.roadpolice.am/ կայքում 13HPVXFGLMSY անհատական ծածկագրի ներքո տեղադրված տեսանյութում:

Իմ իրավունքների պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու նպատակով, ինձ անհրաժեշտ է ունենալ վերը հիշատակված տեսագրությանը նախորդող և հաջորդող տեսագրությունները:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել ք. Երեւանի Գրիգոր Լուսավորիչ/Բեյրութ խաչմերուկի հատվածում տեղադրված տեսախցիկի կողմից 30.06.2013թ.-ին ժամը 18:35-ին կատարած եւ ՀՀ ՃՈ 13.07.2013թ.-ի թիվ 1300732640 որոշման հիմքում դրված տեսագրությանը նախորդող 5 եւ հաջորդող 25 րոպեների տեսագրությունները (նույն տեսախցիկի): Տեսանյութը խնդրում ենք ուղարկել foi@foi.am էլեկտրոնային հասցեին:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան